ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ալեքսան Բենիամինի Ալեքսանյանից

ԻՐԱԶԵԿՈՒՄ
*/հանրային հավաք անցկացնելու վերաբերյալ/*

Հարգելի պարոն Ավինյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ **հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:**

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1. Հավաքի վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հանրապետության հրապարակ:
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2026 թվականի հունիսի 03-ին, 19:00-22:00:
3. Հավաքի նպատակը՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 07-ի հերթական ընտրությունների շրջանակներում:
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 40,000 /քառասուն հազար/ անձ:
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բացօթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ օրվա խորհրդին համապատասխան և դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես՝ Հանրապետության հրապարակում տեղադրվելու է մեծ բեմահարթակ, կոնստրուկցիաններ, ԼԵԴ էկրան, բարձրախոսներ: Հնչելու է հանրային խոսք և տեղի է ունենալու համերգային ծրագիր:
6. Հանրային հավաքին կարգադիրչներ չեն լինելու,
7. Հավաքին նախատեսվում է երթ՝ Սուրբ Խաչ եկեղեցու բակ – Կոմիտասի պողոտա – Բաղրամյան փողոց – Մաշտոցի պողոտա – Ամիրյան փողոց – Հանրապետության:
8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ Ազգանուն Անուն Հայրանուն՝ Ալեքսան Բենիամինի Ալեքսանյան,

Ցանկանում եմ տեղեկացնել, որ ստացել էի համաձայնություն 2026 թվականի հունիսի 03-ին Հանրապետության հրապարակում իրականացնելու հանրային հավաք և սույն իրազեկում նաև կարող եք ընդունել նաև ի լրում իմ կողմից նախորդ ներկայացված իրազեկման:

Խնդրում եմ ընդունել ի գիտություն

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

27/05/2026թ.